ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԱՄ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 21.11.2017թ.-ին կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԱՄ-17/1.1 պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 08-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Վաճառողի մոտ կարիք է առաջացել երկարացնել ապրանքի մատակարարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի Հավելված 1 հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել՝ սահմանելով մինչև դեկտեմբերի 15:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 8.5 և 8.6 կետերը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
21.11.2017թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԱՄ-17/1.1 պայմանագրի

Ք. Երևան 08 դեկտեմբերի 2017թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Զալինյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Կարկոմավտո» ՍՊԸ -ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Շախմուրադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 21.11.2017թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԱՄ-17/1.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված 1 հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել՝ սահմանելով մինչև 2017թ.-ի դեկտեմբերի 15:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«Կարկոմավտո» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 47
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
գործառնական վարչություն,	Հ/Հ 217001094077001
Հ/Հ 900011017739	ՀՎՀՀ 00059627
ՀՎՀՀ 02631263	էլ. հասցեն corporate@autogroup.am
	հեռ. (010)380604, (099)109103
/ստորագրություն/	/ստորագրություն/